ԿԱՐԾԻՔ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի[1] վերաբերյալ նկատառումները ներկայացված են ստորև.

1. Նախագծում տեղ գտած որոշ ձևակերպումներ հասկանալի չեն և իրավակիրառ պրակտիկայում կարող են տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տալ: Մասնավորապես.

Ա.Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի[2] 201-րդ հոդվածի 1-ին կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն. «Ընդհանուր գույքի ծավալը որոշվում է *գույքը բաժանելու պահին առկա գույքի* շրջանակներում:»:

Նշված դրույթում, մասնավորապես, «*գույքը բաժանելու պահին առկա գույք»* ձևակերպումը որոշակի չէ*:*

Բ. Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 201-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով. «6.Ամուսիններից մեկի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում նաև մյուս ամուսինը, եթե ապացուցվում է, որ *ստացվածն* ուղղված է եղել բացառապես համատեղ գույք ձեռք բերելուն կամ գույքը բարելավելուն, սակայն ոչ ավելի, քան ավելացած գույքի՝ *տվյալ ամուսնու* բաժնի չափով*:»:*

Վերոնշյալ կետում անհասկանալի է, թե ինչ է ենթադրվում *«ստացվածն»* բառի ներքո և թե ամուսիններից որ մեկն է *«տվյալ ամուսինը»:*

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերի լեզուն պետք է լինի պարզ, հստակ և մատչելի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք կատարել անհրաժեշտ փոփոխություններ՝ հստակեցնելով Նախագծում օգտագործվող վերոնշյալ ձևակերպումները:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

---

[1] Այսուհետ՝ Նախագիծ

[2] Այսուհետ՝ Օրենսգիրք